

ՍԿՍՆԱԿ ԸՆԹԵՐՅՈՂԻ  
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՔՈՒԹՅՈՒՆ  
ԹՐԵԿԱՆ

891.991 525

10-891 10m 5m 4m 2,

Учмуни сути 10м 4м 20м  
50к.




891.99

թ-89

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՄԱՅԻՆ Ե 1961 Ո.

# ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

A 5472  
5252289



Հ Ս Խ Հ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1960

Պատ. խմբ. Սիրան  
Տնի. խմբ. Տ. Կալվանյան  
Սրբազրիչ Հ. Գնդուխանյան

□

Քրոմիլիտի լիտոգր. № 502  
Պատվեր 545, հրատ. 3690, տիրոժ 10000  
Պետհրատի տպարան Յերևան, Երզն. Գնու. Կ.

□

Հանձնված և արատազր. 7 ապրիլի 1936 թ.  
Ստորագրված և տպագր. 28 ապրիլի 1936 թ.

ԳԻՆԸ ԶԹ 40Գ.

О. ТУМАНЯН  
ДАВИД САСУНСКИЙ  
Гиз ССР Армении, Еревань, 1936 г.

Հ Ո Վ Ք Ր Ո Ւ Մ Ա Ն Յ Ա Ն

Հայ Ժողովրդական մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը ծնվել է 1869 թվին Լուսիա Դսեղ գյուղում :

Գրեթե սկսել է շատ վաղ, 10—11 տարեկան հասակից :

Թումանյանի ստեղծագործությունները վայելում են լայն ժողովրդականութունը : Թումանյանը գրել է Լուսու կյանքից, նա խնամքով հավաքել ու մշակել է Ժողովրդական ստարիկաներն ու ազանդությունները :

Իբ գրվածքներում պատկերացնելով աշխատավոր դյուրացու շարքաչ դրությունը, նա ցույց է արել ու խարազանել է այն անարդար կարգերը, վոք դյուրթյուն ունեյին Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից առաջ :

Թումանյանն Անդրկովկասի հայ, թուրք, վրացի ժողովուրդների մերձեցման ամենաշերտեղանդ ջատադուին է յեղել և այդ ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել, — դրա համար էլ նա սիրված ու հարգված էր նաև Վրաստանի ու Անդրկովկասի աշխատավորության կողմից :

Յերբ տեղի ունեցաւ Հայաստանի խորհրդայնա-  
ցումը թուականն առաջինն եր, վոր վողջունեց  
Սորհրդային իշխանության հաստատվելը Հայաստա-  
նում և ակտիվ աշխատանքի անցաւ Սորհրդային Հա-  
յաստանում, բայց դժբախտաբար 1923 թ. մարտին նա  
մահացաւ և չկարողացաւ շարունակել իր գործը:

Սորհրդային իշխանության՝ որոք բաղմաթիվ ան-  
գամներ հրատարակել կն նրա գործերը և արագ կեր-  
պով սպասվել: Մեր ընթերցող հասարակությանը, թե  
մեծերին և թե փոքրերին շատ լավ ծանոթ են նրա  
«Սասունցի Դավիթը», «Անուշը», «Թմկարերգի ա-  
ռումը», «Փարվանան» և այլ պոեմները, «Գիշորը» և  
բաղմաթիվ արձակ գրվածքներ, բանաստեղծություն-  
ներն ու հեքիաթները:

## I

Առյուծ-Մըհերը, զարմով դյուցազուն  
 Քառասուն տարի իշխում եր Սասուն.  
 Իշխում եր անհեղ, ու նըրա որով  
 Հավքն ել չեր անցնում Սասմա սարերով,  
 Սասմա սարերից շա՛տ ու շատ հեռու  
 Թընդում եր նըրա հըռչակն անարկու,  
 Սասմում եր իր փառքն, արարքն անվեհեր.  
 Հաղար բերան եր՝ մի Առյուծ-Մըհեր:

## II

Եսպես, անախոր առյուծի նրման,  
 Սասմա սարերում նըստած եր իշխան  
 Քառասուն տարի: Քառասուն տարում  
 «Ա՛խ» չեր քաշել նա դեռ իրեն որում.  
 Բայց հիմի, յերբ վոր յեկավ ծերացավ,  
 Են անահ սիրտը ներս սողաց մի ցավ:  
 Սկըսավ մըտածել դյուցազուն ծերը.  
 — Հատել են կյանքիս աշնան որերը,  
 Շուտով սև հողին կերթամ յես գերի,  
 Կանցնի ծըխի պես փառքը Մըհերի,  
 Կանցնեն և՛ անուն, և՛ սարսառի, և՛ ահ,  
 Իմ անտեր ու վորբ աշխարքի վըրա

Վտտի կը կանդնեն հազար քաջ ու դև . . .  
Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման յետև  
Իմ թուրը կապի, Սասուն պահպանի . . .  
Ու միտք եր անում հըսկան ծերունի . . .

III

Մի որ ել՝ են դորջ հոնքերը կիտած  
Յերբ միտք եր անում, յերկնքից հանկարծ  
Մի հուր-հըրեզեն հայանըվեց քաջին,  
Վտաները սոսորտ կանդնեց առաջին:  
— Վողջո՛ւյն մեծագոր Սասմա հըսկային . . .  
Քու ձենը հասավ Ասալծու դահին,  
Ու շուտով նա քեզ մի զամակ կրտա:  
Բայց լավ իմանաս, լեռների արքա,  
Վոր որը վոր քեզ ժառանգ ե տըվել,  
Են որ կը մեանեք քու կինն ել, դու ել:  
— Իր կամքը լինի, սասավ Մըհերը . . .  
Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,  
Բայց վոր սշխարքում ժառանգ ունենանք,  
Մենք ել նրբանով անմեռ կը մընանք:  
Հըրեշտակն ետեղ ցուացավ նորից,  
Ու ես յերջանիկ ավետման որից  
Յերբ իննը ամիս, իննը ժամն անցավ,  
Առյուծ-Մըհերը զավակ ունեցավ:  
Դավիթ անվանեց իրեն կորյունին,  
Կանչեց իր ախպեր Չենով Ոհանին,  
Յերկիրն ու վորդին ավանդեց նըրան,  
Ու կինն ել, ինքն ել են որը մեռան:



Ես դարձամ Մըսըր անհաղթ ու հըզոր  
 Մըսրա-Մեյիքն եր նըստած թագավոր:  
 Հենց վոր խնացայ՝ ել Մըհեր չը կա,  
 Վեր կացայ կըռվով Սասունի վըրա:  
 Ձենով Ոհանը ահից սարսափած՝  
 Թըշնամու առաջն յելայ գըլխարաց,  
 Աղաչանք արայ, ընկայ վոտները.  
 — Դու յեղիբ, ասայ, մեր գըլխի տերը,  
 Ու քու չըվաքում քանի վոր մենք կանք,  
 Գու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք,  
 Միայն մեր յերկիր քարուքանդ չանես  
 Ու քաղցրը աչքով մեղ մըտիկ անես:  
 — Ձե՛, ասայ Մեյիք, քու ամբողջ ազգով  
 Անց սլիախ կենաս իմ թըրի տակով,  
 Վոր եգուց-ելոր, ինչ ել վոր անեմ,  
 Վոչ մի սասունցի թուր չառնի իմ դեմ:  
 Ու դընաց Ոհան՝ բոլոր բովանդակ  
 Սասունը բերայ, քաշեց թըրի տակ.  
 Մենակ Դալիթը, ինչ արին-չարին,  
 Մուռ չեկավ դուշման Մեյիքի թըրին:  
 Յեկան քաշեցին՝ թե զոռով տանեն,  
 Թափ տըվայ, մարդկանց դըցեց դես ու դեն,  
 Փոքրիկ հըկույթը մի քարի առայ,  
 Աղառած քարից կըրակ դուրս թըռայ:  
 — Պետք է սպանեմ ես փոքրիկ ծուռին,  
 Ասայ թագավորն իրեն մեծերին:

— Թագաւոր, ասին, դու ետքան հըղոր,  
 Թըրիդ տակին ե վողջ Սասունն ետր.  
 Ի՞նչ պետք ե անի քեզ մի յերեխա,  
 Թեկուզ իր տեղով հենց կըրակ դառնա:  
 — Ին՛չք դիտեք, ասով Մըսրա Թագաւոր,  
 Բայց թե իմ գըլխին փորձանք դա մի որ,  
 Ես որը վըկա,  
 Սըրանից կը գար:

Վ

Ես վոր պատահեց, մեր Դաւիթ հըսկան  
 Մի մանուկ եր դեռ յոթ-ութ տարեկան.  
 Մանուկ եմ ասում, բայց ենքան ուժեղ,  
 Վոր նըրա համար թե մարդ, — թե մըժեղ:  
 Բայց վա՛յ խեղճ վորրին աշխարքի վըրա,  
 Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա:  
 Ձենով Ոհանին ուներ մի չար կին:  
 Մին-յերկու լըռեց, մի որ ել կարգին  
 Իրեն մարդու հետ սկըսավ կըռվել.  
 — Յես մենակ հոգի, հազար ցավի տեր,  
 Ի՞նչ ես ուրիշի վորրին տուն բերել,  
 Նըստեցրել գըլխիս պարտով հացակեր...  
 Հո՛ղեմ գլուխը... յես գերի հո չե՞մ՝  
 Ամենքի քե՞ֆի յեաւից թըռչեմ...  
 Մի կուռ կորցըր՛ւ, կարգի՛ր մի բանի,  
 Գընա իր համար աշխատանք անի...  
 Ու հետն սկըսավ վողբալ ու կոծել,

Իբր որը սըզալ, իբր բախտն անխժեւ,  
Թե անբախտ յեղալ աշխարքի միջում,  
Վոչ մի տեր ունի, վոչ մարդն ե խըղճում . . .  
Գընաց Ոհանը յերեխի վոտի  
Մի զույգ վոտնաման բերալ յերկաթի,  
Յերկաթի մի կոռ շալակին դըրած,  
Ու արալ Սոսմա քաղքի գառնարած:

VI

Քըչեց գառները մեր հովիվ հըսկան,  
Յեկալ Սասունի սարերն աննըման.

«Ե՛յ ջան, սարե՛ր,  
Սասման սարե՛ր . . .»

Վոր կանչեց նըրա ձենից անալոք  
Դըղորդ-դըմբդըմբոցն ընկալ սար ու ձոր,  
Վայրի գազաններ բըներից փախան,  
Քաքբեքար ընկան, դատարկուն յեղան:  
Դալիթը ընկալ նըրանց յետևից,  
Վորին մի սարից, վորին մի ձորից—  
Աղվես, նապաստակ, դել, յեղնիկ բըռնեց,  
Հալաքեց, բերալ, գառներին խառնեց,  
Իրիկվան քըչեց վողջ Սասմա քաղաք:  
Կաղկա՛նձ ու վոռնո՛ց, աղմո՛ւկ, աղաղա՛կ . . .  
Քողքըցիք հանկարծ մին եւ են տեսան՝  
Գալիս են հըրես անհամար գազան.

«Վա՛յ հարա՛յ փախե՛ք . . .»  
Մեծեր, երեխեք

Սըրսաճաք յեղած,

Գործները թողած,

Վորը տուն ընկալ, վորը ժամ, խանութ,

Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ:

Դավիթը յեկալ, կանդնեց մեյդանում.

— Վա՛հ, ես մարդիկը ի՛նչ վաղ են քընում.

Հե՛յ ուլատեր, հե՛յ դատնատեր,

Յե՛լիք, շուտով բացեք դռներ.

Ով մինն ուներ—տասն հմ բերել,

Ով տասն ուներ—քըսանն արել.

Շուտով յելե՛ք, յեկե՛ք, տարե՛ք,

Ձեր դառն ու ուլ գոմերն արեք:

Տեսա՛վ չեն գալի, դուռ չեն բաց անում,

Ինքն ել մեկնըլից քաղքի մեյդանում,

Գըլուխը շըբա՛վ մի քարի՝ մընաց

Ու մուշ—մուշ քընեց մինչև լուսաբաց:

Լուսին իշխաններ յելան միամին,

Գընացին Ձենով Ոհանին տաին.

— Տո՛ Ձենով Ոհան, տո՛ մահի տարած,

Ես խենթը բերիք, արիք դառնարած,

Վոչ դառն ե ջոկում, վոչ գելն ու աղվես,

Գաղանով լըցրեց մեր քաղաքն եսպես.

Ասոված կըսիրես՝ դի՛ր ուրիշ բանի,

Թե չե ես խալիսին լեղաճաք կանի:

Յելալ Ոհանը, Դավթի մօտ գընաց.  
 — Հորեղբայր Ոհան, հեռո՛ւ յեկ, կամա՛ց,  
 Ուլեր կըլիախչեն:—Մին եւ ենտեղից  
 Մի բոզ նապաստակ, ականջնիրը ցից,  
 Պրտնեց ու ահից դուրս պրծավ հանկարծ:  
 Դավթին եր. յելալ, յետեից ընկած  
 են սարը քըշեց, յետ բերավ ես ձոր,  
 Բերավ, ուլերին խառնեց նորից նոր:  
 — Ո՛Ք, ի՛նչ դըժար ե, հորեղբայր Ոհան.  
 Ասոված տխնել ե են սե-սե ուլեր,  
 Ամա բողալուկ ես ուլեր, վոր կան,  
 Փախչում են, ցըրվում վողջ սարերն ի վեր.  
 Ենքան եմ յերեկ վազել, չարչարվե՛լ,  
 Մինչև հավաքել ու տուն եմ բերե՛լ...  
 Նայեց Ոհանը, վոր Դավթի հագին  
 Վտոնաման չի յել մընացել կարգին,  
 Մահակն ե մաշվել, մինչ բուռն ե հասել,  
 Մի որվա միջում ենքան ե վազել:  
 — Դավթի՛թ ջան, ասով, չեմ թողնի եսպես,  
 Բողալուկ ուլեր չարչարում են քեզ.  
 Եգուց նախիրը կըտանես արտա:  
 Ասով Ոհանը ու մյուս առավոտ  
 Դընաց, նորից նոր մեր Դավթի վոտի  
 Մի ջուխտ նոր տըրեխ բերավ յերկաթի,  
 Յերկաթի մի կոռ հարյուր լըղբական  
 Ու շինեց Սասմա քաղքի նախարապան:

Քըչեց նախիրը մեր նախորդը հըսկան,  
Յերազ Սասունի սարերն աննըման:

—«Յ՛յ, ջան սարեր,  
Սասման սարե՛ր,  
Ի՛նչ անուշ ե

Ձեր լանջն ի վեր...»

Վոր կանչեց, նըրա ձենից ահալոր  
Իրդորդ-դըմբդըմբոցն ընկավ սար ու ձոր:

Վայրի դաղամներ բըներից փախան,  
Քարեքար ընկան, դատարկուն յեղան:

Դավիթն եր՝ ընկավ նրանց յետևից,

Վորին մի սարից, վորին մի ձորից,

Գել, ինձ, առյուծ, արջ վաղըր բըռնեց,

Հալաքեց, բերավ, իր նախրին խառնեց

Ու առաջն արավ դեպ Սասմա՛քաղաք:

Վտոնո՛ց մըրընչո՛ւն, աղմո՛ւկ, աղաղա՛կ...

Վախկոտ քաղքըցիք մին ել ի՛նչ տեսան,

Հենց քաղքի վըրա անհամար դաղամն...

—«Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք...»

Մեծեր, երեխեք

Սըրտաճաք յեղած,

Գործները թողած

Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ,

Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ:

Դավիթը յեկավ կանգնեց մեյդանում.

— Վա՛հ, ես քաղքըցիք ի՛նչ վաղ են քընում է

Հե՛յ կովասեր, հե՛յ դամշասեր,  
 Յելե՛ք, շուտով բացե՛ք դռոճեր,  
 Ով մինն ուներ—տասն եմ բերե՛լ,  
 Ով տասն ուներ—քրտանն արե՛լ:  
 Շուտով յելե՛ք, յեկե՛ք տարե՛ք,  
 Ձեր յեղն ու կով գոմերն արե՛ք:  
 Տեսով՝ չեն դալի, դուռ չեն բաց անում,  
 Ինքն ել մեկնելից քաղքի մեյդանում,  
 Գրլուխը դրբավ մի քարի, մընաց,  
 Ու մուշ—մուշ քընեց մինչև լուտարաց:  
 Լուսին իշխաններ յելան միասին,  
 Գընացին Ձենով Ոհանին ասին.  
 — Ամա՛ն, քեզ մատաղ, ա՛յ Ոհան ախպեր,  
 Մեր յեղն ու մեր կով թող մընան անտեր,  
 Միայն սրանկից ազատ արա մեզ:  
 Վոչ արջն ե ջոկում, վոչ գոմեչն ու յեզ,  
 Մի որ ես քաղքին փորձանք կրբերի,  
 Արջերոց կանի, կըտա կավերի:

IX

Դավիթ չրդառավ, մի կրբա՛կ դառավ:  
 Ճարը կըտըրված՝ Ոհանը բերավ  
 Նեա-աղեղ շինեց ու արվավ իրեն՝  
 Գընա, վորս անի սարերի վըրեն:  
 Դավիթ նեա-աղեղն առավ Ոհանից,  
 Հեռացավ Սասմա քաղքի սահմանից  
 Ու դառավ վորսկան: Գնաց, մի կորկում

Լոր եր սպանում, ճնճողուկ եր զարկում,  
 Մըթանը գընում իրեն հոր ծանոթ  
 Աղքատ, անխորդի մի ծեր կընկա մոտ,  
 Վիշապի նըման, յերկա՛ր, ահադի՛ն  
 Մեկնըվում, քընում կըրակի կողքին:  
 Մի որ ել, յերբ վոր էր վորսից դարձալ,  
 Պառաւր վըրեն սաստիկ բարկացաւ.  
 — Վա՛յ Դամիթ, ասալ, մահըս ասնի քեղ,  
 Դո՛ւ պետք ե են հոր զախակը լինե՛ս:  
 Ձեռից ու վուսից ընկած մի ծեր կին—  
 Յես եմ ու են արան Ասաըծու տակին,  
 Ինչո՛ւ յես դընում, տախում, արբարում,  
 Իմ ամբողջ տարվան ապրուստը կըտրում:  
 Թե վորսկան ես դու—նեա—աղեղըդ ա՛ղ,  
 Ծըծմակա դըլիսից մինչև Սեղանսար  
 Քու հերը ձեռին մի աշխարհ ուներ,  
 Վորսով մեջը լի վորսի սար ուներ.  
 Յեղնիկ կա ենտեղ, այժ՜յամ ու պախրա.  
 Կարո՞ղ ես—գընա, ենտեղ վորս արա:  
 — Ի՞նչ ես ա՛յ պառաւ, ել ինձ անիծում.  
 Յես ջահիլ եմ դեռ, յես նոր եմ լըսում:  
 Վո՞րսեղ ե հապա սարը մեր վորսի...  
 — Գընա՛, հորեղբայրդ.—Ոհանը կասի:

X

Դորեղբոր շեմքում մյուս որր ծեղին  
 Դամիթը կանգնեց աղեղը ձեռքին:



— Հորեղբայր Ռհան, ինչո՞ւ չես ասել՝  
 իմ հերը վորսի սար և ունեցել,  
 Այժմամ կա ենտեղ, յեղջերու, կըխտար.  
 Վեր կաց, հորեղբայր, տար ինձ վորսասար:  
 — Վա՛յ, — կանչեց Ռհան, եղ քու խոռքը չեր,  
 եղ ով քեզ ասավ, լեղուն պապանձվեր:  
 Են սարը, վորդի՛, գընաց մեր ձեռից,  
 Են սարի վորսն ել գընաց են սարից,  
 Ել չկան այժմամ, յեղջերու, կըխտար:  
 Քանի լուսեղեն քու հերը դեռ կար,  
 (Ն՛յ գիգի որեր—վո՛րտեղ եք կորել)  
 Յեա շատ եմ ենտեղ վորսի միս կերել...  
 Քու հերը մեռավ, Աստված խըռովեց,  
 Մըսրա թագավոր գորքեր ժողովեց,  
 Յեկավ, մեր յերկիք քարուքանդ արավ,  
 Ես սարի վորսն ել թալանեց, տարավ.  
 Յեղնիկը գընաց, յեղջերուն գընաց...  
 Մեր գիրն ել հալթաթ հսպես եր գրած:  
 Անցել և, վորդի, քու բանին գընա,  
 Մըսրա թագավոր ձենըդ կիմանա...  
 — Մըսրա թագավոր ինձ ի՞նչ կանի վոր...  
 Յեա ինչ եմ հարցնում Մըսրա թագավոր.  
 Մըսրա թագավոր թող Մըսըր կենա,  
 իմ հոր սարերում ի՞նչ դործ ունի նա...  
 Վեր կաց, հորեղբայր, նես—աղեղդ առ,  
 Կտպարճըդ կապի՛ր, գընանք վորսասար:  
 Յելավ Ռհանը ճարը կըտըրված,  
 Գընացին տեսան՝ ել ի՞նչ վորսասար.

Անտառը ջարդած, պարխապն ավերած,  
Բուրգերը արած գետնին հավասար...

XI

Գիշերը հասավ, մընացին ենտեղ:  
Ձենով Ոհանն եր, իր նետն ու աղեղ  
Դըրավ դլխի տակ, հանդիսա խըրմփաց.  
Դավիթը մընաց մըաքի ծովն ընկած:  
Մին ել նկատեց, վոր մութը հեռվում  
Մի թեթ, փայլվումն կըրակ ե վառվում:  
Են լուսը բընում՝  
Վեր կացավ, դընաց,  
Դընաց ու դընա՛ց, բարձրացավ մի ստր,  
Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար քար  
Կիսից պատըռված,  
Ու միջից վառված  
Բըխում ե լուսը պա՛րզ, քուլա-քուլա՛,  
Բարձրանում, իջնում յետ քարի վըրա:  
Վար իջավ Դավիթ ենտեղից կըրկին,  
Վար իջավ, կանչեց Ձենով Ոհանին:  
— Յե՛լ, հորեղբայր, քանի՞ քընես,  
Յե՛լ, են պայծառ լուսը մի տես:  
Լուս ե իջել բարձր սարին,  
Բարձր սարին, մարմար քարին:  
Յե՛լ, հորեղբայր, անուշ քընից.  
Են ի՞նչ լուս ե բըխում քարից:  
Յելավ, իաչ քաշեց Ոհանն յերեսին.

— Ե՛յ, վորդի, առաջ, մեռնեմ իր լուսին,  
Են մեր Մարութա սարն ե գորբավոր:  
Են լուսի տեղը կանգնած եր մի որ  
Սասմա ապավեն, Սասմա պահապան  
Մեր սուրբ Տիրամոր վանքը Չարխատիան:  
Մըշտական, յերբ վոր կըռիվ եր գընում,  
Ենտեղ եր քու հերն իր աղոթքն սնում:  
Քու հերը մեռալ, Աստված խըռովեց,  
Մըսրա թագավոր գորքեր ժողովեց,  
Մեր վանքն ել յեկալ քանդեց են սարում,  
Բայց դեռ սեղանից լուս ե բարձրանում...

XII

Դայիթը ես ել յերբ վոր իմացալ,  
— Անո՛ւշ հորեղբայր, հորեղբա՛յր, առաջ,  
Վորբ եմ ու անտեր աշխարքի վըրա,  
Հեր չո՛նեմ՝ դու ինձ հերություն արա:  
Ել չեմ իջնի յես Մարութա սարից,  
Մինչև չըշինեմ մեր վանքը նորից:  
Քեղանից կուզեմ հինգհարյուր վարպետ,  
Հինգհազար բանվոր մըշակ նըրանց հեռ,  
Վոր դան՝ ես շարսթ կանգնեն ու բանեն,  
Առաջվան կարգով մեր վանքը շինեն:  
Գընաց Ոհանը ու բերալ իր հեռ  
Հինգ հազար բանվոր, հինգհարյուր վարպետ:  
Վարպետ ու բանվոր յեկան կանդեցին,  
Չըրը՛խկ հա թըրը՛խկ, նորից շինեցին,

Առաջվան կարգով, փառքով փառալոր  
Բարձր Մարութա վանքը Տերամոր,  
Ցըրված միարանք յետ նորից յեկան,  
Նորից թընդացին աղոթք, շարական.  
Ու յերբ շին արայ հոր վանքը նորից,  
Ճած իջայ Դավիթ Մարութա սարից:

XIII

Համբավը տարան Մըսրա Մելիքին.  
— Հաղա՛ չես ասիլ՝ Դավիթը կրկին  
Հոր վանքը շինել, իշխան ե դառել,  
Դու ոխար տարվան խարջը չես առել:  
Մելիք զայրացայ.

— Գընացե՛ք ասայ,  
Բաղին, Կողբաղին,  
Սյուռին, Չարխաղին,  
Սասմա քար ու հող տակն ու վեր արեք,  
Իմ ոխար տարվան խարաջը բերեք:  
Քառսուն կույս աղջիկ բերեք արմազան,  
Քառսուն կարճ կընիկ, վոր յերկանք աղան,  
Քառսունն ել յերկար, վոր ուղտեր բառնան,  
Իմ տանն ու դրոան՝ դարբավաչ դառնան:  
Ու Կողբաղին ասայ զորքեր.

— Գըլխիս վրրա, ասայ, իմ տեր.  
Գընամ հիմի քանդեմ Սասուն,  
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,  
Քառսուն բեռնով դեղին վոսկի,

Տեղը ջրնջեմ Հայոց ազգի:  
Ասամ, Մըսրա աղջիկ ու կին  
Պար բռնեցին ու յերգեցին.  
— Մեր Կողբադին դընաց Սասուն,  
Կանայք բերի քառսուն-քառսուն,  
Քառսուն բեռով վոսկի բերի,  
Մեր ճակատին շարան շարի,  
Կարմիր կովեր բերի կըթան՝  
Գարնան շինենք յեղ ու չորթան:  
Ձա՛ն Կողբադին, քաջ Կողբադին,  
Սասմա Դավթին դարկեց գետին:  
Ու Կողբադին փրջված, ուռած,  
— Շնորհակալ եմ, քույրե՛ր, գոռաց  
Մինչև գալըս դեռ համ բերեք,  
Են Տոմանակ պիտի պարեք...

XIV

Եսպես յերգով,  
Զոռով-գորքով  
Գոռ Կողբադին մըտամ Սասուն.  
Ոհան լրսեց՝ կապվեց լեզուն:  
Աղ ու հացով,  
Լաց ու թացով  
Առաջն յելամ,  
Որնդիրք արամ.  
— Ինչ վոր կուզես առ, տա՛ր, տմա՛ն.  
Վարդ աղջիկներ կանայք Սասման,

Դառը դառած դեղին վոսկին,  
 Միայն թե դրժա մեր խեղճ ազգին,  
 Մի՛ կոտորիր, մի՛ տար մահու,  
 Վերև՝ Աստված, ներքևը՝ դու...  
 Ասավ, բերավ շարան-շարան  
 Վարդ աղջիկներ, կանայք Սասման,  
 Ու հողբադին կանդնեց, ջսկեց,  
 Մարազն արավ, դուռը փակեց:  
 Քառսուն կույս աղջիկ, սիրուն արմազան,  
 Քառսուն կարճ կրճիկ, վոք յերկանք աղան,  
 Քառսուն եւ յերկար, վոք ուղանք բառնան,  
 Մըսրա Մելիքին դարավաշ դառնան:  
 Դեգդեգ կիտեց դեղին վոսկին.  
 Սև սուգ կալավ Հայոց ազգին:

XV

X Հե՛յ, ո՞ւր ես, Դավիթ, Հայոց պահապան,  
 Քարը պատրույթ դո՞ւրս արի մեյդան:  
 Քանդած հոր վանքը վոք շինեց նորեց,  
 Ճած իջավ Դավիթ Մարութա սարից,  
 Ժանդոտած, անկոթ մի շեղբիկ դըտավ,  
 Գընաց՝ պառավի շողգամը մըտավ:  
 Պառավն եր. յեկավ՝ անե՛ծք, աղաղա՛կ.  
 — Վա՛յ, խելա՛ն Դավիթ, շողգամի տեղակ  
 Դու կըբակ ուտես, ցավ ուտես, ասավ,  
 Քու աչքն աշխարհում մե՛նակ ի՞նճ տեսավ.  
 Կորեկըս արիր դետնին հավասար,

Ես եր մընացել ձըմեռվան պաշար,

Ես ել կըտրում ես,

Ել վո՞նց ապրեմ՝ յես:

Քե կըտրի՞ճ ես դու, աղեղդ ան, դընա՛,

Քու հոր աշխարքին տիրութ՛յունն արա՛,

Քու հոր դանձը կե՛ր,

Քողել ես անտեր:

Մըսրա թագավոր դըրկել է՝ տանի:

— Ել ի՞նչ ես վըրես բարկանում, նանի՛,

Եդ ի՞նչ ես ասում, յես չեմ հասկանում,

Մըսրա թագավոր մեր ի՞նչն է տանում...

— Մըսրա թագավոր մեր ի՞նչն է տանում...

Մըսրա թագավոր քու աչքն է հանում,

Դանդալուշ Դամիթի՛ դըրկել է հըրեն,

Յեկել են Սասմա քաղաքի վըրեն

Բադին, Կոզրադին,

Սյուշին, Չարխադին,

Քալան են տաքի բովանդակ Սասում.

Քառսուն բեռ վոսկի խարաջ են ուզում,

Քառսուն կույս աղջիկ սիրուն, արմաղան,

Քառսուն կարճ կընիկ, վոր յերկանք աշան,

Քառսուն ել յերկաթ, վոր ուղտեր բառնոն,

Մըսրա Մելիքին դարավաշ դստնան:

— Ի՞նչ ես, ա՛յ պանամ, ել ինձ անիծում.

Ցույց տուր մի տեսնեմ՝ — վո՞րտեղ են ուզում:

— Վո՞րտեղ են ուզո՞ւմ... Մահըս տանի քե՛զ.

Դո՞ւ պետք է են հզր դավակը լինե՛ս...

Յեկել ես՝ ետեղ շաղգամ ես լափում...

Վոսկին Կողբադին ձեր տանն ե չափում,  
 Աղջիկներ փրլել մարազն են լըցրած:  
 Շողգամը թողեց Դամիթ ու գընաց:  
 Տեսա՛վ Կողբադին իրենց տան միջին,  
 Չափում ե վոսկին թեղած առաջին,  
 Սյուդին, Չարխադին պարկերն են բրունել,  
 Չենով Ոհանն ել շրլինքը ծրուել,  
 Կանգնել ե հեռու, ձեռները ծոցին:  
 Տեսա՛վ, աչքերը արնով լըցվեցին:  
 — Վե՛ր կաց, Կողբադին, հեռու՛ւ կանգնիր դու,  
 Իմ հոր վոսկին ե— յես եմ չափելու:  
 — Կողբադին տա՛վ, —ե՛յ, Չենով Ոհան,  
 Կըտաա—տո՛ւր իարջը ես սխտը տարվան  
 Թե չե՛ կը գընամ, միբու՛լըս վրկար,  
 Մըսրա—Մելիքին կը պատմեմ, կը գա,  
 Չեր Սատմա յերկիր քար ու քանդ կանի,  
 Տեղը կը վարի, բոտտան կը ցանի:  
 — Կորե՛ք, անգգամ դուք Մըսրա չըներ,  
 Իա չե՞ք իմացել դուք Սատմա ծրուեր...  
 Մեռա՞՞ծ եք կարծում դուք մեզ, թե՞ չըվաք,  
 Կուդիք մեր յերկիր դընեք խարջի տա՛կ...  
 Բարկացա՛վ Դամիթ, չափը չըլըրտեց,  
 Տըվա՛վ Կողբադնի գըլուխը Չարդեց,  
 Չափի փըլլտանքը պատն անցա՛վ, գընաց,  
 Մի՞նչե որս ել դեռ գընում ե թըռած:  
 Ու յերան՝ թափած վոսկին թողեցին,



Հայոց աշխարհից փախան դընացին  
Բաղին, Կողբադին,  
Սյուդին, Չարխադին:

XVI

—Վա՛յ, վա՛յ, Հորեղբա՛յր, ի՞նչ ասեմ յես քեզ  
Մենք ունենք եստեղ դեղին վսակու դեզ:  
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,  
Դու թողել ես ինձ ստարի դըռան...  
Հորեղբայրն ասավ.— Ա՛յ խենթ, խելագար,  
Վոսկին պահել եմ Մեկիքի համար,  
Վոր քաղցրը լինի աչքը մեզ վըրա:  
Չըտըվիր, հիմի վոր զորք առնի՝ դա,  
Սասմա քար ու հող հեղեղի, տանի,  
Ո՞վ դեմը կերթա, ո՞վ կըռիվ կանի:  
— Դու կա՛ց, Հորեղբա՛յր, թող դա, յե՛ս  
կերթամ<sup>ձ</sup>  
Կերթամ, յե՛ս նրբան պատասխան կըտամ:  
Ու մտթ մարագի դըռանը զարկեց,  
Փակած աղջիկներ հանեց, արձակեց:  
— Գընացե՛ք ասավ, ազատ ապրեցե՛ք,  
Սասունցի Դավթին արև խընդրեցե՛ք:

XVII

Եսպես Չարդված, արյունը վա  
Փախան, ընկան հողը Մըսրա  
Բաղին, Կողբադին,

Հայոց աշխարհից փախան դընացին  
Բաղին, Կողբադին,  
Սյուզին, Չարխադին:

XVI

— Լա՛յ, վա՛յ, Հորեղբա՛յր, ի՛նչ ասեմ, յես քեզ  
Մենք ունենք եստեղ դեղին մոսկու դեզ,  
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,  
Դու թողել ես ինձ ստարի դրոան...  
Հորեղբայրն ասավ. — Ա՛յ խենթ, խելազար,  
Վասկին սահել եմ Մելիքի, համար,  
Վար քաղցըր լինի աչքը մեզ վրա:  
Չըտրվիր, հիմի վոր զորք առնի՝ դա,  
Սասմա քար ու հող հեղեղի, տանի,  
Ո՞վ դեմը կերթա, ո՞վ կըռխվ կանի:  
— Դու կա՛ց, Հորեղբա՛յր, թող դա, յե՛ս  
կերթամ՝  
կերթամ, յե՛ս նըրան պատուխան կըտամ:  
Ու մտթ մարադի դրոանը զարկեց,  
Փակած աղջիկներ հանեց, արձակեց:  
— Դընացե՛ք ասավ, ազատ ապրեցե՛ք,  
Սասունցի Դավթին արև խընդրեցե՛ք:

XVII

Եսպես Չարդված, արյունլու  
Փախան, ընկան հողը Մըսրա  
Բաղին, Կողբադին,

Սյուղին, Չարխաղին:

Մըսրա կանայք հեռախց տեսան,

Հեռախց տեսան, ուրախացան

Ու ծափ տըլլին կըտերներին.

— Յեկա՛ն յեկա՛ն, բերի՛ն, բերի՛ն...

Մեր Կողբաղին գնաց Սասուն,

Կանայք բերալ քառսուն-քառսուն,

Կարմիր կովեր բերալ կըթան՝

Գարնան շինենք յեղ ու չորթան...

Հենց մտտեցան, նըկատեցին,

Ծափ ու խընդում ընդհատեցին,

Քըրքըջացին

Ու կանչեցին.

— Ե՛յ, Կողբաղին մեծարերան,

Եղ վո՞րտեղից լերան-լերան,

Լերան-լերան կըզասս փախած,

Հագտ գըլուխըդ կիսից ճըղանձ:

Են դո՞ւ չասիր՝ դընամ Սասուն,

Կանայք բերեմ քառսուն-քառսուն,

Քառսուն բեռնալ վոսկի հանեմ,

Հայոց յերկիր ավեր անեմ:

Գացիր Սասուն քանց գեղ դազան,

Յեա ես դալիս քանց չուն վազան...

Ու Կողբաղին խիստ բարկացալ.

— Սո՛ւս կացեք դուք, Լըրբե՛ր, ասալ.

Ձեր մարդիկն եք տեսել դուք դեռ,

Դուք չե՞ք տեսել Սասմա ծըռեր:

Սասմա ծըռեր լերան-լերան,

Նևտեր ունեն մի-մի գերան.  
 Սասմա յերկիր քար ու կապան,  
 Իրժար սարեր, ձոր ու ծապան.  
 Նըրանց խտտեր—ինչպես կեռ թուր,  
 Զորք ջարդեցին յերեք հարյուր.  
 Ասով ու ել չառավ դադար,  
 Վըռադ-վըռադ, դըլխապատառ  
 Վազեց իրեն թագավորին:  
 Խընդաց թագավորն իր աթոռին:  
 — Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կողբադին,  
 Արժե՛ կասեմ յես քու ճըտին.  
 Մեր դուզդունի մեծ նըչանը—  
 Պարզև քու մեծ հաղթությանը:  
 Ո՛ւր են, հապա առաջըս բեր  
 Սասմա վոսկին ու աղջիկներ:  
 Ասով Մելիք, ու Կողբադին  
 Գըլուխ տըլավ մինչև գետին.  
 — Ապրա՛ծ կենաս, մեծ թագավոր,  
 Զոռո՛վ փախա յես ձիավոր,  
 Վո՞նց բերեյի Սասմա վոսկին:  
 Մի խենթ ծընվեց Հայոց ազդին,  
 Վոչա՛հ գետի, վոչ տեր ու մեծ,  
 Գըլուխս եսպես տըլավ, ջարդեց.  
 Ձե՛մ տալ, տտավ, իմ հոր վոսկին,  
 Չե՛մ տալ կանայքն իմ հայ ազդին,  
 Սասմա յերկիր ձեղ տեղ չըկա...  
 Քու թագավոր, ասավ, թո՛ղ դա,  
 Թող դա՛ ինձ հետ կըռխվանի,

Քե զոչազ ե՛ զոռով տանին:

Կառազեց, փլըրփրեց Մըսրա թագավոր.  
— Կանչեցե՛ք, ասալ, իմ դժբքը բուլոր.  
Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,  
Հազար հազար մարդ անբխ, անմորուք,  
Հազար հազար մարդ բխը նոր ծրլած,  
Հազար հազար մարդ նոր թախտից յելած,  
Հազար հազար մարդ թուխ միրուքավոր,  
Հազար հազար մարդ սպխտակ ալևոր,  
Հազար հազար մարդ, վոր փողեր հընչեն,  
Հազար հազար մարդ, վոր թըմբուկ զարկեն.  
Կանչեցե՛ք, թող պան, հաղնեն զե՛նք, զըբա՛հ,  
Կըռխով տի գընամ յես Դավթի վըրա,  
Սասունն ալերեմ,  
Հեղեղեմ, բերեմ:

XVIII

Եսողես անհամար դժբքեր հավաքեց,  
Յեկտի Սասմա դաշտ, բանակը զարկեց  
Ու ծանըր նըստեց Մըսրա թագավոր:  
Ենքան ահադին բազմութ յունն են որ  
Բաթմանա ջրբին յեկավ ու չոքեց,  
Ով յեկավ, խըմեց—գետը ցամաքեց,  
Սասմա քաղաքում մընացին ծարավ:  
Չենով Ոհանին զարմանքը տարավ:  
Բուրքը ուն առավ, սարը բարձրացավ.  
Սարը բարձրացավ, տեսավ, ի՛նչ տեսավ:

Ճերմակ վըրանից դաշտը ճերմակել,  
Ասես՝ են գիշեր ճըմեռը յեկել,  
Սպիտակ ճյունով պատել եր Սասուն,  
Լեղին ջուր կտրեց, կապ ընկավ լեզուն,  
Հարս՝ յ կանչելով՝ փախավ տուն ընկավ,  
— Վա՛յ, փախե՛ք, յեկա՛վ... հա՛յ, հարս՝  
յեկավ...

— Ի՞նչը, հորեղբա՛յր, ի՞նչը, ի՞նչն յեկավ...

— Ցամն ու կըրա՛կը Դավթի պինչը յեկավ,

Մըսրա թագավոր յելել ե, յեկել,

Յեկել, մեր դաշտին բանակ ե զարկել:

Թիվ կա ասողերին, թիվ չկա զորքին...

Վա՛յ մեր արևին, վա՛յ մեր աշխարքին...

Յե՛կ, վոսկին տանենք, աղջիկներ տանենք,

Չոքենք առաջին, սրադատանք անենք,

Գուցն թե զըթա,

Մեզ սըրի չըտա...

— Դու կա՛ց, հորեղբա՛յր, զու զարդ մի՛ անիր-

Գընա, քու ողում դու հանդիստ քընիր.

Հիմի յես կելնեմ, Սասմա դաշտ կերթամ,

Մըսրա-Մելիքին պատասխան կըտամ:

Ու գընաց Դավթի ծանոթ պոռտովին.

— Նոնի ջա՛ն, ասավ, ժանգատած ու հին.

Յերկաթի կըտոր, անթարսց, շամփուր,

Ինչ ունես չունես՝ հավարքի՛ր, ինձ տուր,

Մի եչ ել զըտիր, վոր վըրեն նստեմ,

Կըռիվ աի գընամ Մըսրա զորքի դեմ,

— Վա՛յ, Դավիթ, ասալ, մահս տանի քեզ.  
 Դո՛ւ պետք է են հոր զաւակը լինե՛ս...  
 Ո՛ւր է քու հոր հըրեղենն ձին,  
 Ո՛ւր է քու հոր թուր Կեծակին,  
 Ո՛ւր է քու հոր գոտին վոսկի,  
 Խաչ սրատրաստին իր աջ բազկի,  
 Ո՛ւր է քու հոր ծալ-ծալ կապեն,  
 Գուրդը սողպատ, թամբ սաղափեն,  
 Վար յեկեկ կս, ա՛յ խենթ ու ծուռ,  
 Ինձնից կուզես եչ ու շամփո՛ւր...  
 — Ի՛նչ ես, նանի, ել բարկանում,  
 Զահեկ եմ յես, չեմ իմանում.  
 Յես քեզնից եմ լքում ետք.  
 Զենք ու գրբահն ո՛ւր են իմ հորս:  
 — Հորեղբորդդ գընա հացուր.  
 Ո՛ւր են, ասա, հանի՛ր, բեր, տուր:  
 Իան ե, թե վոր չըտա սիրով,  
 Աչքը հանիր՝ խըլիբ դուռով:

## XIX

Դավիթ գընաց Ոհանի մտա.  
 — Ե՛յ հորեղբայր, իմ հերահոտ,  
 Տո՛ւր ինձ իմ հոր հըրեղենն ձին,  
 Տո՛ւր ինձ իմ հոր թուր Կեծակին,  
 Տո՛ւր ինձ իմ հոր գոտին վոսկի,  
 Խաչ սրատրաստին իր աջ բազկի,  
 Տո՛ւր ինձ իմ հոր ծալ-ծալ կապեն,

Գուրգը պողպատ, թամբ սաղափեն...  
— Թու հոր մահվան տարուց — որից  
Դուքս չեմ հանել ձին ախոռից,  
Վոչ սընդուկից թուր-կեծակին,  
Ջըրահ շապիկ, վոսկի դոտին...  
Ինձ թող, ամա՛ն, մի՛ նպանիր,  
Կուզես — չըրեն, դընա հանի՛ր:

XX

Հազով Դավիթ դենքն ու զըրահ,  
Կապեց դոտին, թուր-կեծակին,  
Խաչն ել իր հաղթ բազկի վըրա,  
Յեկավ, հեծավ Առյուծ հոր ձին,  
Կանչեց, իր ձին ասպանդակեց:  
Ձենով Ոհան լալով յերգեց.

— Ափսո՛ս, հազա՛ր ափսոս հըրեղեն մեր ձին,  
Ա՛խ, հըրեղեն մեր ձին.

Ափսո՛ս, հազա՛ր ափսոս մեր վոսկի դոտին,  
Ա՛խ, մեր վոսկի դոտին.

Ափսո՛ս, թանկ կապեն, վոր հազին տարավ,  
Ա՛խ, վոր հազին տարավ...

Դավիթ բարկացավ,  
Ձին քեց, դարձավ,  
Ոհանը վախեց,  
Իր յերդը փոխեց.

«Ափսո՛ս, նորելուկ Դավիթըս կորավ,  
Ա՛խ, Դավիթըս կորավ»:



Ես վոր իմացալ,  
Դավթի մեղմացալ,  
Իջալ, Ոհանի ձեռքը համբուրեց:  
Ձենալ Ոհանն ել, ինչպես հայր ու մեծ,  
Որհնեց, խըրատեց նրբան հայրաբար,  
Դեպի Սասմա դաշտ դըրալ ճանապարհ:

XXI

Սասունցի Դավթին ուներ մի քեռի,  
Անունը Թորոս, ահեղ աժդահա:  
Սա ել իմացալ համբաւը կըռվի,  
Մի բարդի ուսին գալիս ե ահա:  
Դալիս ե՛ հեռվից բարձրը դողալով.  
— Ի՛նչ եք վեր յեկել ես դաշտի միջում,  
Քանի գըլխանի մարդիկ եք կամ ո՞վ,  
Սասունցի Դավթին վոր չեք ճանաչում...  
Բա չե՞ք իմանում, վոր ետեղ ե նա  
Գալու՝ խաղացնի իր ձին թևալոր.  
Ձըքվեցե՛ք, հիմի ուր վոր ե՛ կըգա,  
Յեկել եմ սըրբեմ մեյդանը ետոր:

Ասալ ու քաշեց իր սուի բարդին,  
Սըրբեց բանակից մի քըսան վրբան...  
Դավթին ել ահա սարի գազաթին  
Կանգնած՝ գոռում ե վիշապի նըման.

— Ով քընած եք՝ արթուն կացե՛ք,  
Ով արթուն եք՝ յեկե՛ք, կեցե՛ք,

Ով կեցել էք՝ զենք կապեցե՛ք,  
Չենք եք կապել՝ ձի թամբեցե՛ք,  
Զի՛ յեք թամբել՝ յելե՛ք, հեծե՛ք:  
Հետո շտեք՝ թե մենք քրնած—  
Դավթի՞ գող-գող յեկավ, գընաց...

Եսպես կանչեց, ասպանդակեց,  
Ու, ինչ ամպից կեծակ զարկի,  
Մըսրա գորքի մեջ տեղ զարկեց,  
Եողացնելով թուր-կեծակին:

Ջարդեց, փրչրեց մինչև կեսոր.  
Կեսոր արինն յելավ հեղեղ,  
Քըչեց, տարավ հազարավոր  
Մարդ ու դիակ վողջ միատեղ:

Կար գորքի մեջ մի արևոր,  
Աշխարք տեսած ու բանապետ.  
—Տըղե՛րք, ասավ, ճամբա տըվեք,  
Գընամ խոսեմ յես Դավթի հետ:

Գընաց, կանգնեց Դավթի առաջ,  
Եսպես խոսեց են ձերունին.  
—Դալար կենա՛ կուռըդ, ով քաջ,  
Սուրըդ կըտրուկ միշտ քու ձեռին:

Մի ձերունուս խոսքին մըտիկ,  
Տե՛ս, քու խելքը ինչ է կըտրում:

Ի՞նչ են արել քեզ ես մարդիկ,  
Հե՞ր ես սըբանց դու կոտորում:

Ամեն մինը մի մոր վորդի,  
Ամեն մինը մի սան ճըրագ,  
Վորը կինն ե թողել ենտեղ  
Աչքը ճամբին, խեղճ ու կըրակ,

Վորը մի տուն լիք մանուկներ,  
Վորը ծընող աղքատ ու ծեր,  
Վորը լացով, քողն յերեսին  
Նորապըսակ ջահել հարսին...

Թագավորը դոռով-թըրով  
Հավաքել ե, ետեղ բերել:  
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս որով,  
Մենք քեզ վընաս ի՞նչ ենք արել:

Թագավորն ե քու թըշնամին,  
Կրւիվ ունես— իր հետ արա,  
Հե՞ր ես քաշում թուր-իեծակին  
Ես անճարակ խալխի վըրա:

— Լավ ես ասում դու, ծերունի՛,  
Ասավ Դավիթն ալևորին,  
Բայց Թագավորն ո՞ւր ե հիմի,  
Վոր սև կապեմ նըրա որինս

— Մեծ վըրանում զընած ե նա,  
Ե՞ն, վոր միջից ծուխը կելնի.  
Են ծուխն ել հո ծուխ չի վոր կա,  
Գուրջին ե իր բերանի:

Ասին. դեպի մեծ վըրանը  
Ասպանդակեց Դավիթն իր ձին,  
Քըչեց, գընաց ու դըռանը  
Գուռաց կանգնած արարներին:

— Ո՞ւր ե, ասավ, ի՞նչ ե կորել,  
Դուրս կանչեցե՛ք, դա ասպարեզ,  
Թե մահ չունի՝ մահ կմ բերել,  
Գըրող չունի՝ գըրողն կմ յես...

— Մելիքն ասին, քուն ե մըտել,  
Ոխտը որով պետք ե զընի.  
Յերեք որն ե դեռ անցկացել,  
Չորս որ ել կա, քունը առնի:

— Ի՞նչ, բերել ե յողջատ ու խեղճ  
Խալխին լըցրել ծովն արյունի,  
Ինքը մըտել վըրանի մեջ՝  
Ոխտը որով հանդիստ զընի՛...

Քընել-մընել չեմ հասկանում,  
Վե՛ր կացրեք չո՛ւտ, դուրս դա մեյդան,  
Ենպես գըրան յես զընացնեմ,  
Վոր չը գարթնի ել հավիտյան:

Յեկան՝ մարդիկ ճարահատուած  
Շամփուր դըրին թե՛ կըրակին  
Ու դարկեցին խոր մըրափած  
Մըսրա՝ Մեւթի բաց կըրնկին:

— Ո՞ք, ել հանդիստ քուն չունի մարդ  
Ես անիծւած լրվի ձեռից,  
Սոր մըրընչաց հըսկան հանդարտ  
Ու շուռ յեկավ, քընեց նորից:

Յեկան, բերին մեծ դռթանի  
Սոփը դըրին թե՛ կըրակին,  
Ու կասկարմիր, կեծկըծալի,  
Շիկնած աըվին մերկ թիկունքին:

— Ո՞ք, ել հանդիստ քուն չունի մարդ  
Ես անիրավ մոծակներից.  
Աչքը բացալ հըսկան հանդարտ,  
Ուզում եր յետ քընել նորից,

Տեսալ՝ Դավթին: Գլուխն ահեղ  
Վեր բարձրացրեց մըրընչալով,  
Փըչեց վըրեն, վոր թըռցընի  
Են աժդըհին մի փըչելով:

Տեսալ, տեղից ժաժ չի դալի,  
Չարմանքն ու ահ պատեց հողին:  
Աընտ աչքերն ըսպառնալի  
Հառեց խոժոռ Դավթի աչքին:

Նայեց թե չե, զգաց՝ իր մեջ  
Տասը դոմչի ուժ պակասեց:  
Պառկած տեղից վրա նստեց  
Ու ժպտալով հեռը խոսեց.

— Բարո՛վ, Դավիթ, հոգնած ես դեռ.  
Յե՛կ, մի նստի՛ր, խոսենք կարգին,  
Հետո դարձյալ կըռխիվ կանենք,  
Յեթե կըռխիվ կուզես կըրկին...

Իր վրբանում բըռնակալը  
Քառսուն գազ խոր հոր եր փորել,  
Ցանցով փակել մութ բերանը,  
Վըրեն փափուկ խալի փըռել:

Ում վոր հաղթել չեր կարենում,  
Շողոմելով կանչում եր նա,  
Նըստեցնում եր իր վրբանում  
Են կորստյան հորի վրա:

Իջալ Դավիթ ձիուցը ցած,  
Գընաց նըստեց... ընկալ հորը:  
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խընդաց  
Մըսրա դաժան թողալորը:

— Իե, թող հիմի դընա՛ խալար  
Հորում փըթի, ենքան մընա:

Ու ահադին մի ջաղացքար  
Բերավ, դըրավ հորի վըրա:

XXII

Քընեց են դիշեր Ձենով Ոհանը:  
Դիշերն յերազում յերևաց ծերին՝  
Մըսրա յերկընթում արև հառադած,  
Սև ամպ եր պատել Սասմա սարերին:

Սաստիկ վախեցած վեր թըրավ տեղից:  
— Վա՛յ, կընիկ, ասավ, մի ճըրադ արա՛,  
Դընա՛ց մեր անխորճ Դավիթը ձեռից,  
Սև ամպ եր իջել Սասունի վըրա:

— Հողե՛մ դըլուխդ, ասավ կընիկը,  
Ո՛վ գիտի՛ Դավիթն ո՛ւր ե քե՛ֆ անում...  
Դու ել քեզ համար քո՛ւ տանը քընած՝  
Ուրիշի համար յերազ ես տեսնում:

Քընեց Ոհանը: Վերկացավ դարձյալ.  
— Կընի՛կ, Դավիթը նեղ տեղն ե ընկած.  
Մըսրա վառ աստղը շողում եր պայծառ,  
Մեր աստղը հիվանդ ցուքում դալկացած:

— Ի՞նչ յեղավ քեզ, մա՛րդ, դիշերվան կիտին.  
Բարկացավ վըրեն կընիկն աղմուկով:  
Ոռչ քաշեց ել յես Ոհանն յերեսին,  
Շուռ յեկավ, քընեց խըռոված հողով:

Մի ուրիշ պատկեր ավելի ահեղ.  
Տեսա՛վ յերկընթի բարձր կամարում,  
Վտու՛լում եր Մըսրա աստղը փառահեղ,  
Սամա աստղիկը սուղվեց խալարում:

Չարթնեց վախեցած:—Տունըդ քանդվի, կի՛ն,  
Յես վո՛նց լըսեցի քու եղ կարճ խելքին.  
Կորա՛վ մեկ-մեկակ մեր ջահիլն անտեր.  
Վե՛ր կաց, շո՛ւտ արա, գենքերըս մի բե՛ր...

### XXIII

Յեկա՛վ Ոհան, գոմը մըտա՛վ,  
Չարկեց ճերմակ ձիու մեջքին.  
— Ե՛յ, ճերմակ ձի, մինչ յե՛րբ, ասա՛վ,  
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Մինչև լույս կըհասցնեմ.»  
Ու ձին տըլա՛վ փորը գետին:  
— Մեջքդ կոտրի՛, լուսն ի՞նչ անեմ.  
Լաչին հասնեմ յես թե՞ նաչին:

Կարմիր ձիու մեջքին զարկեց.  
Սա ել յերես փորը գետին:  
— Չա՛ն կարմիր ձի, մինչ յե՛րբ դու ինձ  
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Մի՛ ժամի մեջ, կարմիրն ասա՛վ,  
Կըհասցընեմ Դավթի կըռվին»:



— Լեղի դառնա, սև մահ ու ցամ,  
Ինչ տրվել եմ քեզ՝ են դարին:

Ղերթը յեկամ սեին հասամ.  
Գետին չերես փորը սև ձին:  
— Ե՛յ Չան Սևուկ, մինչ յե՛րբ, ասամ,  
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Յեթե ամուր մեջքիս մընաս,  
Վոարդ դընես ասպանդակին,  
Մինչև մեկել վոարդ շուռ տաս,  
Կըհասցընեմ», ասամ սև ձին:

#### XXIV

Սև ձին քաշեց Ձենով Ոհան,  
Չախը դըրամ ասպանդակին,  
Աջն ել մինչև շուռ տար վրբան,  
Կանդնեց Սասմա սարի գըլխին:

Տեսամ Դավթի նըթույն անտեր  
Սարերն ընկած խըրխընջալով,  
Ներքև Մըսրա գորքը չոքած,  
Ինչպես անձեր ծըփուն մի ծով:

Ոխտը գոմշի կաշի հագամ,  
Վոր չըպատուի իրեն գուկց,  
Կանդնեց Ոհան, ամպի նըման  
Գոռաց Սասմա սարի ծերից:

— Հե՛ր յհե՛ր, Դա՛յիթ, վո՞րտեղ ես դու.  
Հիշե՛ր խաչը քո աջ բազկի,  
Սուրբ Տիրամոր անունը տո՛ւր,  
Լո՛ւսը դուրս յե՛կ արեգակի:

Ձե՛նը դընաց դըմ՛դըմ՛բալով՝  
Դա՛յիթի ահանջն ընկավ հորում.  
— Հա՛յ հա՛յ, ասա՛վ, հորեղբայրս ե.  
Սասմա սարից ինձ ե դռում:

Ո՛վ Մարութա Սասմաճաճին,  
Խաչ պատրաստի իմ աջ բազկի,  
Ձե՛զ եմ կանչել ես նեղ ժամին...  
Կանչեց, տեղից յելավ վտաքի,

Ենպես դարկեց ջաղացքսրին՝  
Քարը յեղավ հազար կրտոր,  
Կրտորներիը յերկինք թըռան,  
Ու դնում են մինչև ետոր:

Յելավ հորից, կանգնեց ահեղ:  
Սարսափ կալավ դև Մելիքին:  
— Դա՛յիթ ախպեր, յե՛կ դեռ ետեղ,  
Սեղան նըստե՛նք, խոսենք կարգի՛ն...

— Ել չեմ նըստիլ յես քու հացին,  
Դու տրմարդի, մախկոտ ու նենդ.  
Շո՛ւտ, դենքըդ առ, հեծ՛իր քու ձին,  
Դո՛ւրս յեկ մեյդան, կըռի՛վ անենք:

— Կըռիվ անենք, ասավ Մելիք.

Ի՞մն ե միայն զարկն առաջին:

— Քոնն ե, զարկի՛ր, կանչեց Դավիթ  
Դընաց, կեցավ դաշտի միջին:

Յելավ, կանգնեց Մըսրա-Մելիք,  
Իր գուրզն առավ, հեծավ իր ձին,  
Գըչեց, գընաց մինչ Դիարբեքի  
Ու ենտեղից յեկավ կըրկին:

Յերեք հազար լիդր եր քաշում  
Հըսկայական իր մըկունդը.  
Յեկավ, զարկեց. կորավ ինչու  
Ու յերերաց յերկրի դունդը:

— Յերկիր քանդվեց կամ ժամք յեղավ,  
Ասին մարդիկ շատ աշխարհում:

— Չե՛, ասացին, արնի ծարավ  
Հըսկաներն են իրար զարկում:

— Մեռավ Դավիթ ես մի զարկեց,  
Ասավ Մելիք իրեն զորքին:

— Կենդանի յե՛մ, ամպի տակից  
Գոռաց Դավիթ Մըսրա-Մելեքին:

— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից յեկա,  
Տե՛ս, վո՛րտեղից հիմի կըգամ:  
Ու վերկացավ, կանգնեց հըսկան,  
Իր ձին հեծավ յերկրորդ անգամ:

Յերկրորդ անգամ քչեց Հալսր  
Ու բաց թողեց ձին Հալսրից-  
Բուք վեր կացալ, տեղ ու տարափ,  
Արար աշխարհ դողաց թափից:

Յեկալ, զարկեց զարկի ձենից  
Մտտիկ մարդիկ վողջ խըլացան:  
— Գընա՛ց Դավիթ Սասմա տանից,  
Գուժեց գոռոզ Մըսրա արքան:

— Կեդանի՛ յեմ, կանչեց Դավիթ,  
Մին ել արի՛— հերթն ինձ հասալ,  
— Հա՛յ-հա՛յ, մտտիկ տեղից յեկա,  
Կանչեց Մեկիք ու վեր կացալ:

Յերրորդ անգամ հեծալ իր ձին,  
Գընաց մինչև հողը Մըսրա,  
Ու ենտեղից, դուրդը ձեռին  
Քըչեց, յեկալ Դավիթի վըրա:

Յեկալ, զարկեց բոլոր ուժով,  
Մանըր զարկով հըսկայական.  
Փոշին յելալ Սասմա դաշտից,  
Բըռնեց յերեսն արեգական:

Յերեք դիշեր ու յերեք որ  
Փոշին կանդնեց ամպի նըման,  
Յերեք դիշեր ու յերեք որ  
Բոթը տըվին Դավիթի մահվան:

Յերբ վոր անցալ յերեք որը,  
Են ամպի պես կանգնած փոշում  
Կանգնեց Դավիթ, ինչպես սարը,  
Գրբգուն սարը մեզ-մըշուշում:

— Մելի՛ք, տասլ, ո՞ւմն ե հերթը:  
Սարսափ կալալ գոռ Մելիքին,  
Մահվան դողը ընկալ սիրաը  
Ու տասլ արալ գոռոզ հոգին:

Գրնաց խորունկ մի հոր փորեց,  
Իջալ, մըտալ վիհն են խալար,  
Վըրին քաշեց քառսուն կաշի  
Ու քառասուն ջաղացի քար:

Մըռընչարոյ յելալ տեղից  
Են առյուծի առյուծ վորդին,  
Իր ձին հեծալ ու փոթորկեց,  
Պաղաց, շողաց թուր-հեծակին,

Առաջ վաղեց մաղերն արձակ  
Մելիքի պառալ մայրը ջաղու.  
— Դավիթ, մաղըս ա՛ն վոտիդ տակ,  
Եզ մի դարկը ինձ բուշխիր դու:

Յերկրորդ անգամ թուրը քաշեց,  
Ես անգամ ել յեկալ քուրը.  
— Դավիթ, յեթե կուզես, կանչեց,  
Իմ սըրտին դա՛րկ յերկրորդ թուրը:

Վերջին դարկի ժամը հասալ,  
Յելալ Դավիթ յերբորդ անգամ.  
— Ես մի դարկն ու Աստված, ասալ,  
Ել մարդ չըզա, պետք ե վոր տամ:

Ես անգամ, ել քեռի Թորոսն  
Առաջ յեկալ ձեռն արած դեմ.  
— Դավիթ, ասալ, լալ իմանաս,  
Կըչեռք պիտի գըցեմ, քաշեմ:

Մորամեղի յերկու կեսը  
Թե հալասար չեկան իբար,  
Ել չտեսնես իմ յերեսը,  
Դավիթ չես ել դու ինձ համար:

Ասալ, յելալ ու փոթորկեց,  
Թըռալ, ցոլաց Դավթի հուր ձին,  
Ջին փոթորկեց, փայլատակեց  
Ու ցած իջալ Թուր-Կեծակին:

Անցալ քառսուն գոմ չի կաշին,  
Անցալ քառսուն քարերը ցած,  
Միջից կըտրեց ժանտ հըրեշին,  
Ոխտը դադ ել դենը գընաց:

— Կենդանի՛: յեմ, մին ել արի՛,  
Դոռաց Մելիք հորի տակից:  
Դավիթ լսեց, շատ դարմացալ  
Իրեն դարկից, Թուր-Կեծակից:

—Մելի՛ք, ասա՛վ, թա՛փ տուր մի քեզ:  
Ու թափ-տրվա՛վ Մելի՛քն իրեն,  
Միջից յեղա՛վ ճիշտ յերկու. կես,  
Մեկն ընկա՛վ դեսն ու մյուսը՝ դեն:

Ես վոր տեսա՛վ Մըսրա բանակ,  
Ջուր կըսըր՛վեց ահ ու վախից:  
Դավիթ կանչեց.—Մի՛ վախենա՛ք,  
Ակա՛նջ արե՛ք հալա դեռ ինձ:

Դուք ըռանչա՛ր մարդիկ, ասա՛վ,  
Ջուրի ու խաղա՛ր, քաղցած ու մերկ,  
Հաղար ու մի կրբակ ու ցա՛վ,  
Հաղար ու մի հոգսեր ունե՛ք:

Ի՞նչ եք առել նետ ու անոթ,  
Յեկե՛լ թափել ստար դաշտեր.  
Չե՞՞ վոր մենք ել ունենք տուն-տեղ,  
Մենք ել ունենք մանուկ ու ծեր...

Չանձրացե՞՛լ եք խաղաղ ու հաշտ  
Հողադորժի որ ու կյաքից,  
Թե՞՞ զրզի՛ել եք ձեր հանդ ու դաշտ,  
Չեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձե՛ք յեկած ճանապարհով  
Չեր հայրենի հողը Մըսրա.  
Բայց թե մի՛ն ել զենք ու զուռով  
Վեր եք կացել դուք մեզ վրա,

Հորում լինեն քուսուն գաղխոր  
Թե ջաղացի քարի տակին,—  
Կելնեն ձեր դեմ, ինչպես եսոր,  
Սամա Դալիթ, Թուր-Կեծակին:

Են ժամանակ Աստված գիտի,  
Ով մեղանից կրլնի փռչման.  
Մե՞նք, վոր կելնենք ահեղ մարտի,  
Թե դուք, վոր մեզ արիք դուշման...

---





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040574

I

5472